2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Երևանի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշման՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ին, ժամը 19:00-ին գումարվելու է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 6-րդ արտահերթ նիստը.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021թ. հոկտեմբերի 9-ին Խորհրդի կազմով Էրեբունի-Երևան ծննդյան 2803-ամյակին ընդառաջ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի արձանների լվացման և Հրազդանի կիրճում շաբաթօրյակ կազմակերպելու վերաբերյալ ծրագրի ներկայացում (Խորհրդի անդամ Ռաֆֆի Գյոզալյան):
2. Ներկայացված ծրագրի վերաբերյալ առաջարկների ներկայացում և քննարկում (Խորհրդի անդամներ):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

2021 թվականի հոկտեմբերի 5-ին, ժամը 19.00-ին, Երևանի քաղաքապետարանում՝ Երևանի Արգիշտի 1 հասցեում, տեղի ունեցավ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 6-րդ արտահերթ նիստը, որին Խորհրդի 20 անդամներից մասնակցում էին 9-ը:

Նիստը, Խորհրդի նախագահի համաձայնությամբ, վարում էր Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը:

Գրիգոր Երիցյանը ներկայացրեց 6-րդ նիստի օրակարգը:

Օրակարգի 1-ին կետին համաձայն՝ Էրեբունի-Երևանի ծննդյան 2803-ամյակին ընդառաջ 2021թ. հոկտեմբերի 9-ին Խորհրդի կազմով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի արձանների լվացման և Հրազդանի կիրճում շաբաթօրյակ կազմակերպելու վերաբերյալ հարցը ներկայացրեց նախաձեռնության (այսուհետ՝ Միջոցառում) հեղինակ, Խորհրդի անդամ Ռաֆֆի Գյոզալյանը: Նա ներկայացրեց իր կողմից մշակված միջոցառման կազմակերպման նախնական տարբերակը, համաձայն որի Միջոցառումը կմեկնարկի երկու խմբով՝ առավոտյան 09:00-ին Կենտրոն վարչական շրջանում թվով հինգ արձանների լվացմամբ, որին կմասնակցի առաջին խումբը: Այնուհետև ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի մոտ միանալով երկրորդ խմբին կշարժվի դեպի Հրազդանի կիրճ՝ շաբաթօրյակ անցկացնելու նպատակով: Միաժամանակ նշեց, որ միջոցառման կազմակերպման հարցում անհրաժեշտ կլինի Երևանի քաղաքապետարանի աջակցությունը համապատասխան տեխնիկական միջոցներ և պարագաներ տրամադրելու, ինֆորմացիոն ապահովում իրականացնելու և երիտասարդների մասնակցությունն ապահովելու հարցերում:

Որոշում կայացվեց Խորհրդի կողմից պատրաստել Երևանի քաղաքապետին ուղղված գրություն վերոնշյալ հարցերի վերաբերյալ՝ կցելով Խորհրդի նիստին ներկա անդամների ստորագրությունները:

Քննարկվեց նաև Միջոցառման արդյունքում առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերած անհատներին շնորհակալագրերով պարգևատրելու հնարավորության հարցը:

Դավիթ Մուրադյանն առաջարկեց Միջոցառման ընթացքում ձևավորել խմբեր և միաժամանակ իրականացնել պլոգինգ:

Խորհրդի որոշ անդամներ մտավախություն հայտնեցին, որ ժամանակի սղության պատճառով հնարավոր է հանդիպել խոչնդոտների:

Ռաֆֆի Գյոզալյանը վստահեցրեց, որ տեխնիկական բոլոր հարցերի կարգավորման պատասխանատվությունը վերցնում է իր վրա: Իսկ Խորհրդի մնացած ներկա անդամները հավաստիացրեցին տեղեկատվության տարածմանը և երիտասարդների մասնակցությունը ապահովելու մասին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**